ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
DEVELOPMENT FOUNDATION OF ARMENIA
ФОНД РАЗВИТИЯ АРМЕНИИ

№ ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-1
«25» մարտի 2015թ.

Ձեր №

ՀՐԱՎԵՐ-ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ-Ի ՀԵՏ ԱՎԻԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ
ԿՆՔԱԾ ԱՆՁԱՆՑ

Հարգելի պարոն պարոն/տիկին

ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հայաստանի զարգացման հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված աշխատանքները:

Աշխատանքների կատարումն իրականացվում է սույն գրությանը կից ներկայացված պայմանագրի նախագծով սահմանված կարգով:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, N 819 սենյակ, Տիրան Լաճիկյանին, մինչև 2015թ-ի ապրիլի 06-ը, ժամը 10:30-ը:

Հայտերը կբացվեն Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով, N 819 սենյակում, 2015թ-ի ապրիլի 06-ին, ժամը 10:30-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ- ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և Ձեր կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մկրտչյան փող. 5, 0010, ք. Երևան, Հեռ.՝ (+374 11) 597 802
ул. М. Мкртчян 5, 0010, г. Ереван, Тел.: (+374 11) 597 802
5 M. Mkrtchyan str., 0010, Yerevan, Tel.: (+374 11) 597 802

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 15 (տասնհինգ) էջ:

Հարգանքով՝

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մկրտչյան փող. 5, 0010, ք. Երևան, Հեռ.՝ (+374 11) 597 802
ул. М. Мкртчян 5, 0010, г. Ереван, Тел.: (+374 11) 597 802
5 M. Mkrtchyan str., 0010, Yerevan, Tel.: (+374 11) 597 802

ՀՋՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված **ՀՋՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1** ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը*** /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1.				
2.				

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

ՀՋՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Դ Ի Մ ՈՒ Մ
ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

_____հայտնում է, որ ցանկություն ունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Մասնակցելու Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից ՀՋՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1 ծածկագրով հայտարարված ընթացակարգի _____
չափաբաժնի անվանումը

չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____:
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1-1

Քաղ. Երևան «__» _____-ի 2015թ.

Հայաստանի զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Ա. Խաչատրյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____-ն (այսուհետ՝ նաև Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն _____-ի, մյուս կողմից, (Պատվիրատուին և Կատարողին միասին հիշատակման դեպքում, այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսոջհետ՝ նաև Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.3. Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և դրանով սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանքը սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը (եթե Աշխատանքի համար արդեն վճարվել է), վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը և հատուցելու վնասները.

2.1.3. Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները, եթե՝

ա) Կատարողը ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանքը Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում չի փոխարինվել սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով.

2.1.5. Կատարողի կողմից սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.3. կետով նախատեսված տույժը կամ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում Կատարողի կողմից կարծիքի ներկայացված նախագծերի և/կամ օրինակների վերաբերյալ հայտնել իր դիրքորոշումը դրանք ներկայացվելու օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2.2. Քննարկել և ընդունել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.3. Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը Կատարողին տրամադրել նմուշային տպագրվելիք նյութերի դիզայնը և տեղեկատվությունը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված օրինակելի ձևով:

3.2 Արձանագրությունը Պատվիրատուի կողմից ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ և համապատասխանում է Կողմերի միջև համաձայնեցված նախահաշվին: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից

գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքի կատարման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է չորս էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N 3 և N 4 հավելվածները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՏԱՐՈՂ***
Հայաստանի զարգացման հիմնադրամ	
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	
Հ/հ՝ 1570021885790100 «Ամերիաբանկ» ՓԲԸ	
ՀՎՀՀ՝ 02634631	
_____ *Ա. Խաչատրյան*	

Հավելված N 1
«__» _____ի 2015թ.
կնքված N ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1-1
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 1	
Չափաբաժնի անվանում Կատալոգ	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի պաշտոնական կատալոգների տպագրական աշխատանքներ: Կատալոգը պետք է ունենա տեղեկատվություն՝ 250-300 կազմակերպությունների վերաբերյալ և բաղկացած լինի առնվազն 200 էջից: Կատալոգը փակված վիճակում պետք է լինի՝ երկարություն 26 սմ, լայնություն 18 սմ: Կազմը՝ 300 գր, կավճապատ, անփայլ լամինացիա, տեղային UV լաքապատում: Թուղթ՝ 115գր, կավճապատ, անփայլ: Կատալոգի բոլոր էջերը և կազմը պետք է լինեն թելակար և ջերմասոսընձված: Գունայնություն՝ 4+4: Տպաքանակը՝ 1500 օրինակ: Կատարողը պարտավոր է տրամադրված տեղեկատվությունը բերել ընդհանուր ձևաչափի, սրբագրել անգլերեն և ռուսերեն լեզուներով, այնուհետև համաձայնեցել պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Կատալոգի դիզայնը և կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը (լոգո, տեղեկատվություն՝ անգլերեն և հայերեն) տրամադրում է Պատվիրատուն: Կատարողը պարտավոր է մատակարարել կատալոգները Պատվիրատուի նախանշված վայր (ք. Երևան):	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 2	
Չափաբաժնի անվանում Բուկլետ 1	
Կատարողը իրականացնում է Հայաստանի զարգացման հիմնադրամի հիմնական գործառույթները ներառող բուկլետների տպագրական աշխատանքներ: Չափը փակված վիճակում A4 ֆորմատի 2 փեղկանի (գունավոր տպագրություն գույների քանակը 4+4, քաշը 130գր, 300 dpi, 2 լեզվով), որոնց վրա պետք է տպված լինի ՀԶՀ-ի լոգոտիպը և տեղեկատվություն՝ պատվիրատուի կողմից տրված տեքստին և դիզայնին համապատասխան: Տպաքանակը՝ 300 հատ: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Կատարողը պարտավոր է մատակարարել բուկլետները Պատվիրատուի նախանշված վայր (ք. Երևան):	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 3	

Չափաբաժնի անվանում Բուկլետ 2	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի վերաբերյալ բուկլետների տպագրական աշխատանքներ: Չափը փակված վիճակում A4 ֆորմատի 2 փեղկանի (գունավոր տպագրություն գույների քանակը 4+4, քաշը 130գր, 300 dpi, 2 լեզվով), որոնց վրա պետք է տպված լինի ՀՋՀ-ի լոգոտիպը տեղեկատվություն՝ պատվիրատուի կողմից տրված տեքստին և դիզայնին համապատասխան: Տպաքանակը՝ 1000 հատ: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Կատարողը պարտավոր է մատակարարել բուկլետները Պատվիրատուի նախանշված վայր (ք. Երևան):	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	19 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 4	
Չափաբաժնի անվանում Բեյջ	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի՝ թվով 850 բեյջերի տպագրական աշխատանքներ: Բեյջերը պետք է լինեն 14*8.5սմ չափսի՝ գույների խտությունը 300 dpi կետայնությամբ, գույների քանակը 4+0, քաշը 250գր., թղթե՝ պլաստիկով լամինացված : Բեյջերը լինեն ամրակով՝ վզից կախելու հնարավորությամբ, թելի հաստությունը 1.5 սմ, երկարությունը՝ 95 սմ, գույնը սպիտակ, թելի վրայի տպագրությունը՝ 0.8 սմ լայնությամբ: Թելի վրա տպագրված պետք է լինի MADE IN ARMENIA EXPO 2015 բառերը՝ 4 անգամ: Բեյջերի վրա պետք է տպագրված լինի ՀՋՀ-ի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության լոգոտիպերը: Դիզայնը և տեքստը տրամադրում է պատվիրատուն: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Կատարողը պարտավոր է մատակարարել բեյջերը Պատվիրատուի նախանշված վայր (ք. Երևան):	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 5	
Չափաբաժնի անվանում Բաներ 1	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի բաների տպագրական և պատվիրատուի նախանշված վայրում գտնվող (ք. Երևան) շինության վրա տեղադրման աշխատանքները: Չափը՝ 10,5մx18,5մ, 1440 dpi կետայնությամբ տպագրություն, գույների քանակը 4+0, ջրակայուն, ծալվելու դեպքում՝ չջարդվող, կախելու հնարավորությամբ: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն:	
Աշխատանքների կատարման ժամկետները	

Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 6	
Չափաբաժնի անվանում Բաներ 2	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի բաների տպագրական և պատվիրատուի նախանշված վայրում (ք. Երևան) շինության վրա տեղադրման աշխատանքներ: Չափը՝ 5մx35մ, 1440 dpi կետայնությամբ տպագրություն, գույների քանակը 4+0, ջրակայուն, ծալվելու դեպքում՝ չջարդվող, կախելու հնարավորությամբ: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն:	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 7	
Չափաբաժնի անվանում Բաներ 3	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի ցանցային թվով 2 բաների տպագրական և պատվիրատուի նախանշված վայրում (ք. Երևան) շինության վրա տեղադրման աշխատանքներ: Չափերը՝ 10.8մx88մ և 3.2մx6մ, 340 գր, 720 dpi կետայնությամբ տպագրություն, գույների քանակը 4+0, ջրակայուն, կախելու հնարավորությամբ: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն:	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 8	
Չափաբաժնի անվանում Բաներ 4	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի կախովի՝ թվով 48 բաների տպագրական և պատվիրատուի նախանշված վայրում (ք. Երևան)՝ շինության առաստաղի կոնստրուկցիայից կախելու աշխատանքներ: Չափը՝ 1.2*2.4մ, 1440 dpi կետայնությամբ տպագրություն, գույների քանակը 4+4, ջրակայուն, ծալվելու դեպքում՝ չջարդվող, կախելու հնարավորությամբ: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն:	
Աշխատանքների կատարման ժամկետները	

Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 9	
Չափաբաժնի անվանում Բաներ 5	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի մեկ բաների տպագրական և պատվիրատուի նախանշված վայրում (ք. Երևան) տեղադրման աշխատանքներ: Չափը՝ 2մx3մ, 1440 dpi կետայնությամբ տպագրություն, գույների քանակը 4+0, ջրակայուն, ծալվելու դեպքում՝ չջարդվող, կանգնեցնելու համար կոնստրուկցիայով: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն:	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 10	
Չափաբաժնի անվանում Բաներ 6	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի կախովի՝ թվով 60 բաների տպագրական և պատվիրատուի նախանշված վայրում (ք. Երևան)՝ ճանապարհի եզրերին տեղադրված սյուների վրա տեղադրման աշխատանքներ: Չափը՝ 0.8*3.6մ, 1440 dpi կետայնությամբ տպագրություն, գույների քանակը 4+0, ջրակայուն, ծալվելու դեպքում՝ չջարդվող, ծալված վիճակում կարված երկու կողմերից՝ 1.5 դյույմ արտաքին մակերեսով մետաղական խողովակներին ամրացնելու համար: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն:	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 11	
Չափաբաժնի անվանում Բաներ 7	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի մեկ իքս բաների տպագրական աշխատանքներ՝ համապատասխան մետաղական կոնստրուկցիաների վրա ամրացված: Չափսը՝ 180*80սմ: Տպագրություն՝ 1440dpi կետայնությամբ, գույների քանակը 4+0: Ջրակայուն, ծալվելու դեպքում՝ չջարդվող: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն: Կատարողը պարտավոր է մատակարարել Պատվիրատուի նախանշված վայր (ք. Երևան):	

Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 12	
Չափաբաժնի անվանում Բաներ 8	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի մեկ րոլլափ բաների տպագրական աշխատանքներ՝ համապատասխան մետաղական կոնստրուկցիաների վրա ամրացված: Չափսը՝ 200*80սմ: Տպագրություն՝ 1440dpi կետայնությամբ, գույների քանակը 4+0: Ջրակայուն, ծալվելու դեպքում՝ չջարդվող: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն: Կատարողը պարտավոր է մատակարարել Պատվիրատուի նախանշված վայր (ք. Երևան):	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 13	
Չափաբաժնի անվանում Հրավիրատոմս	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի թվով 300 հրավիրատոմսի տպագրական աշխատանքեր՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն, յուրաքանչյուրից 100 հատ: Չափը՝ 80x120 մմ, 300 dpi կետայնությամբ, գույների քանակը 4+4, քաշը 250 գր., դիսպերսիոն, կազմը լինի լաքապատված: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ: Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն: Կատարողը պարտավոր է մատակարարել Պատվիրատուի նախանշված վայր (ք. Երևան):	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	19 ապրիլի 2015թ:
Չափաբաժին 14	
Չափաբաժնի անվանում Անվանապաստառ	
Կատարողը իրականացնում է Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015 (MADE IN ARMENIA EXPO 2015) ցուցահանդեսի կախովի՝ թվով 250 անվանապաստառների տպագրություն և պատվիրատուի նախանշված վայրում (ք. Երևան)՝ տաղավարների ճակատային մասում տեղադրման աշխատանքներ: Չափը՝ 4*0.3մ և 3*0.3մ ըստ Պատվիրատուի քանակների, 1080 dpi կետայնությամբ տպագրություն, գույների քանակը 4+0, ջրակայուն, շրջանակով՝ կախելու հնարավորությամբ: Կատարողը համաձայնեցնում է վերջնական տեսքը պատվիրատուի հետ տպագրությունից առաջ:	

Դիզայնը և տեսքը տրամադրում է պատվիրատուն:	
Աշխատանքների կատարման ժամկետները	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:	23 ապրիլի 2015թ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի զարգացման հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Հ/հ՝ 1570021885790100 «Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 02634631

_____ *Ա. Խաչատրյան*

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված N 2
«__» _____ի 2015թ.
կնքված N ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1-1
պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Ընդամենը Տարի
1.	Կատալոգ	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
2.	Բուկլետ 1	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
3.	Բուկլետ 2	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
4.	Բեյջ	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
5.	Բաներ 1	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
6.	Բաներ 2	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
7.	Բաներ 3	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
8.	Բաներ 4	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
9.	Բաներ 5	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
10.	Բաներ 6	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
11.	Բաներ 7	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
12.	Բաներ 8	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
13.	Հրավիրատոմս	... %	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

14.	Անվանապաստառ	… %	… %	… %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի զարգացման հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Հ/հ՝ 1570021885790100 «Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 02634631

_____ Ա. Խաչատրյան

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված N 3
«__» _____ի 2015թ.
կնքված N ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1-1
պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ***ԿԱՏԱՐՈՂ***

Հայաստանի զարգացման հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Հ/հ՝ 1570021885790100 «Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 02634631

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» _____ 2015թ.

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» _____-ի 2015թ.

Պայմանագրի համարը՝ ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1-1

Պատվիրատուն, ի դեմս Հայաստանի զարգացման հիմնադրամի ծրագրային ավագ փորձագետի ժ/պ Վ. Սաղաթելյանի և Կատարողն՝ ի դեմս _____-ի տնօրեն _____-ի, հիմք ընդունելով այն, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը 2015թ-ի _____-ի __-__-ը իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ ծառայության մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
(ստորագրություն)

ազգանուն_____

Կ.Տ

Աշխատանքը ընդունեց

_____
(ստորագրություն)

ազգանուն_____

Կ.Տ